ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆԻ ՍԱՏԲ-Ի ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅՏԱՐԱՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 25-ն և 2016թ.-ի հունիսի 14-ի թիվ 64-Ն հրամանները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Քանաքեռ-Զեյթունի տարածքային բաշինը (այսուհետ՝ ՍԱՏԲ) սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով տարածաշրջանում Համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպեությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Կողմեր) հրավիրում են հայտագրվելու և ձևավորելու համակարգող խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող, ՀՀ կառավարության 2015 թվականի սոպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո 2 տարի ժամկետով:

Կողմերը Խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները (հայտերը) կարող են ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Քանաքեռ-Զեյթունի տարածքային բաժին մինչև 2018 թվականի փետրվարի 15-ը (հասցեն՝ Դավիթ Անհաղթի 11, հեռախոս՝ 011-51-88-34):

Հայտարարագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

ա) սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փոձը,

բ) սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացումը:

Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է Տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության Համաձայնագրում:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի

Քանաքեռ-Զեթյունի

Սոցիալական աջակցության տարածքային բաժին